

Կ-167<sup>3</sup>-24.10.2017-ՊԻՄԻ-011/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետը ձանաչել ուժը կորցրած:

**Հոդված 2.** Օրենսգրքի 29.1-ին գլուխը ձանաչել ուժը կորցրած:

**Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 1-ից:
2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդունված վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ներկայացված հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումները քննվում են Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող 29.1-ին գլխով սահմանված կարգով:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կ-167-24.10.2017-ՊԻՄԻ-011/1 և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Կ-167<sup>3</sup>-24.10.2017-ՊԻՄԻ-011/1 ՀՀ օրենքների նախագծերի փաթեթում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

Կ-167<sup>3</sup>-24.10.2017-ՊԻՄԻ-011/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) [3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:](#)

**Հոդված 2.** Օրենսգրքի 29.1-ին գլուխը [ճանաչել ուժը կորցրած:](#) ~~չարտադրել նոր խմբագրությամբ:~~

~~«Գ ————— Լ ————— ՈՒ ————— Խ ————— 29.1  
ԱՆՔՈՂՈՔԱՐԿԵԼԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ  
ՊԱՀԱՆՁՆԵՐՈՎ ԳՈՒՄԱՐԻ ԲՈՆԱԳԱՆՃՄԱՆ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅՅԸ~~

~~Հոդված 216.1. Անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը~~

~~1. Անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերը (այսուհետ՝ բռնագանձման վերաբերյալ գործեր) հարուցվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հիմքերով՝ այդ ակտն ընդունած վարչական մարմնի հայցադիմումի հիման վրա:~~

~~2. Բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը վարչական դատարան կարող է ներկայացվել՝~~

~~1) եռամսյա ժամկետում՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալու պահից:~~

~~2) երկամսյա ժամկետում՝ հարկադիր կատարողի կողմից հանրային իրավական դրամական պահանջով կատարողական վարույթը կարճելու պահից:~~

3. Բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին վարչական դատարանի որոշմամբ վերանում է տվյալ վարչական ակտի անբողոքարկելի լինելը:

**Հոդված 216.2. Բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումին ներկայացվող պահանջները**

1. Բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 73-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, նաև ներառում է տեղեկություններ՝

1) վարչական ակտն ուժի մեջ մտնելու և անբողոքարկելի դառնալու մասին:

2) հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու օրենքով սահմանված որևէ սահմանափակման առկայության մասին:

3) մինչև հայցադիմում ներկայացնելը հանրային իրավական դրամական պահանջի բավարարված չափի և վճարման կատարման ժամկետի մասին:

2. Բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը ներկայացվում է սույն օրենսգրքի 74-րդ հոդվածին համապատասխան: Հայցադիմումին կցվում են նաև բռնագանձման պահանջով վարչական դատարան դիմելու համար հիմք հանդիսացած վարչական ակտը, վարչական ակտի ուժի մեջ մտնելը հավաստող ապացույցները, ինչպես նաև սույն օրենսգրքի 216.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ հանրային իրավական դրամական պահանջով կատարողական վարույթը կարճելու մասին հարկադիր կատարողի որոշումը:

3. Բռնագանձման վերաբերյալ գործերով հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված հիմքերի, վերադարձվում է նաև սույն օրենսգրքի 216.2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված պահանջները չպահպանելու դեպքում:

**Հոդված 216.3. Բռնագանձման վերաբերյալ գործի քննությունը**

Բռնագանձման վերաբերյալ գործերը վարչական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով՝ բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերի:

Գրավոր ընթացակարգով գործի քննությունն իրականացվում և վճիռ է կայացվում հայցադիմումը վարույթ ընդունելու պահից մեկամսյա ժամկետում, որի հրապարակման վայրի և ժամանակի մասին նշվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ:

Վարչական դատարանը բռնագանձման վերաբերյալ գործով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ուղարկելու հետ միաժամանակ կողմերին ծանուցում է սույն հոդվածի 5-

~~րդ, իսկ պատասխանողին նաև 4 թղ մասով նախատեսված իրավունքների և դրանց իրականացման ժամկետների մասին:~~

~~Բռնագանձման վերաբերյալ գործով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում պատասխանողը իրավունք ունի ներկայացնել հայցադիմումի պատասխան կամ հակընդդեմ հայց, եթե հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ բացառում է սկզբնական հայցի բավարարումը:~~

~~Գրավոր ընթացակարգով գործը քննելիս կողմը կարող է ապացույցներ ներկայացնել և միջնորդություններ անել սույն հոդվածի 4 թղ մասով սահմանված ժամկետում, իսկ այդ ժամկետի ավարտից հետո՝ եթե հիմնավորում է այդ ժամկետում ապացույցներ ներկայացնելու կամ միջնորդություններ անելու անհնարինությունը:~~

~~Հակընդդեմ հայցը ներկայացվում է հայց ներկայացնելու ընդհանուր կանոններով՝ սույն հոդվածի 4 թղ մասի առանձնահատկությունների հաշվառմամբ:~~

~~Հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու, ինչպես նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար գործի քննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու անհրաժեշտության այլ դեպքերում վարչական դատարանը կայացնում է բռնագանձման վերաբերյալ գործի քննությունը բանավոր ընթացակարգով անցկացնելու մասին որոշում՝ նշելով նախնական դատական նիստի անցկացման վայրը և ժամանակը:~~

~~Հակընդդեմ հայցը վարույթ ընդունվելու, ինչպես նաև պատասխանողի կողմից վարչական ակտի իրավաչափության դեմ առարկելու դեպքում վարչական մարմինը կրում է վիճարկվող վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների ապացուցման բեռը և պարտավոր է մինչ այդ ներկայացրած չլինելու դեպքում մեկշաբաթյա ժամկետում դատարան ներկայացնել վարչական վարույթի նյութերը:~~

~~Բռնագանձման վերաբերյալ գործի քննության ընթացքում դատարանը պարզում է վարչական ակտն առոչինչ լինելու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը, վարչական ակտի ուժի մեջ մտած լինելու, անբողոքարկելի դառնալու, հանրային իրավական դրամական պահանջներով նախատեսվող գումարն արտադատական կարգով բռնագանձելու՝ օրենքով սահմանված որևէ սահմանափակման առկայության, ինչպես նաև անբողոքարկելի վարչական ակտով նախատեսված պարտավորությունը ամբողջությամբ կամ մասամբ կատարված չլինելու հանգամանքները, իսկ հակընդդեմ հայցը վարույթ ընդունվելու կամ վարչական ակտի իրավաչափության դեմ առարկություն ներկայացվելու դեպքում նաև՝ վարչական ակտի իրավաչափությունը:~~

~~Հոդված 216.4. Բռնագանձման վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտերը~~

~~1. Անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումի քննության արդյունքում վարչական դատարանը կայացնում է հետևյալ դատական ակտերից մեկը-~~

~~1) հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու մասին՝ անբողջությամբ կամ մասնակիորեն բռնագանձելով հանրային իրավական դրամական պահանջով նախատեսված գումարը-~~

~~2) հայցը մասնակիորեն բավարարելու մասին՝ վարչական ակտը ձանաչելով մասնակիորեն անվավեր կամ առ ոչինչ՝ մասնակիորեն բռնագանձելով հանրային իրավական դրամական պահանջով նախատեսված գումարը-~~

~~3) հայցն անբողջությամբ մերժելու մասին՝ վարչական ակտը ձանաչելով անբողջությամբ անվավեր կամ առ ոչինչ:»:~~

**Հոդված 23. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում [2018 թվականի ապրիլի 1-ից](#) ~~պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը [ընդունված վարչական ակտերի հիման վրա](#) Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ներկայացված հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ հայցադիմումները քննվում են Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ~~խմբագրությամբ~~ 29.1-ին գլխով սահմանված կարգով:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

ՀՀ Աժ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կ-167-24.10.2017-ՊԻՄԻ-011/1 և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Կ-167<sup>3</sup>-24.10.2017-ՊԻՄԻ-011/1 ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
1.	ՀՀ կառավարություն	Նախագծերի փաթեթ	<p>Առաջարկվում է Վարչական դատավարության օրենսգրքի 29.1-րդ գլուխը ճանաչել ուժը կորցրած, համապատասխան փոփոխություններ կատարել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքներում՝ նախատեսելով, որ Հանրային իրավական դրամական պահանջները բոլոր դեպքերում կատարվեն անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ ԴԱՀԿ մարմնի կողմից՝ առանց վարչական մարմնի կողմից գումարի բռնագանձման պահանջով դատարան դիմելու, միևնույն ժամանակ պահպանելով վարչական ակտի հասցեատիրոջ կողմից նշված ակտերը վարչական կամ դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը:</p>	<p>Նախագծերի փաթեթը լրամշակվել է:</p> <p>Նախագծերի փաթեթը լրացվել է «Վարչարարության հիմունքների եվ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով</p>	<p align="center">Ընդունվել է:</p>